# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԲԸՀԱՇՁԲ-16/8

ք. Երևան 08.09.2016 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության <Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն Մ. Քյուրքչյանի, որը գործում է ՀՀ քաղաքաշինության նախարարության <Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Խաչատուրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով և տեխնիկական բնութագրով նախատեսված՝ **ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի դպրոցի վերակառուցման** աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 10.11.2016 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24213944 (Քսանչորս միլիոն երկու հարյուր տասներեք հազար ինը հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ, որից 4035657 (Չորս միլիոն երեսունհինգ հազար վեց հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2016 թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում

գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ ա տ վ ի ր ա տ ու | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ | <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ, |
| ՀՀ 900011009314, ՀՎՀՀ 02553861 | Հ/Հ 16017962400400, ՀՎՀՀ 04715751 |
| Տնօրեն ---------- Մ. Քյուրքչյան | Տնօրեն ---------- Ա. Խաչատրյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված թիվ 1
08.09.2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/8 գնման պայմանագրի

Ծավալաթերթ –Նախահաշիվ
ՀՀ Արագածոտնի մարզի գյուղ Քուչակի դպրոցի վերակառուցման աշխատանքների

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ. միավորը | Քանակը | Միավորի արժեքը | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 1-1. Տարածքի բարեկարգում,մարզական վարժասարքերի կառուցում | | | | |
| | Հողային աշխատանքներ | | | | |
| 1 | Բնահողի կտրում 0,3մ տեղափոխում թափոնատեղ 20,0մ հեռավորությամբ վրա և հարթեցում տարածքում 70,0մ$^2$ | մ$^3$ | 21.0 | 0.17 | 3.57 |
| | Վերանորոգման աշխատանքներ | | | | |
| | Ասֆ/բետոնե սալվածք | | | | |
| 1 | Մանրահատիկ ասֆ/բետոնե սալվածքի իրականացում h=4սմ | մ$^2$ | 54.0 | 3.77 | 203.39 |
| 2 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում h=12սմ | մ$^2$ | 54.0 | 1.32 | 71.10 |
| 3 | Հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 15x30 մմ չափերի բետոնե հիմքի վրա | մ | 61.0 | 6.63 | 404.22 |
| 4 | Բազալտե աստիճանների տեղադրում 150x300 մմ չափերի | մ | 21.0 | 10.26 | 215.48 |
| 5 | Բետոնե նախաշերտի իրականացում | մ$^3$ | 2.0 | 35.46 | 70.91 |
| 6 | Հարթակի և կողապատերի երեսապատում բազալտե սալերով b=30մմ | մ$^2$ | 20.0 | 12.58 | 251.52 |
| | Խաղահրապարակի իրականացում | | | | |
| 1 | Մանրահատիկ ասֆ./բետոնե ծածկույթի իրականացում h=4սմ | մ$^2$ | 60.0 | 3.60 | 216.11 |
| 2 | Խոշորահատիկ ասֆ./բետոնե ծածկույթի իրականացում h=6սմ | մ$^2$ | 60.0 | 4.72 | 283.26 |
| 3 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում h=20սմ | մ$^2$ | 60.0 | 1.65 | 99.06 |
| 4 | Հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 15x30 մմ չափերի բետոնե հիմքի վրա (B12,5 դասի) | մ | 12.0 | 6.63 | 79.52 |
| 5 | Դրոշակաձող | կ-տ | 1.0 | 105.03 | 105.03 |
| 6 | Նստարանների տեղադրում | հատ | 12 | 29.1 | 349.18 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Ուժային վարժությունների հարթակի մայթի իրականացում S=6,0մ$^2$ | մ$^3$ | 0.6 | 35.46 | 21.27 |
| 8 | Հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 15x30 մմ չափերի բետոնե հիմքի վրա (B12,5 դասի) | մ | 8.0 | 6.63 | 53.01 |
| | Ասֆ./բետոնե ծածկույթի վերանորոգում | | | | |
| 1 | Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում (4սմ մանրահատիկ ասֆ/բետոն առկա ծածկի վրա, նախօրոք մաքրելով փոշուց, կեղտից) | մ$^2$ | 2020.0 | 361.24 | 7297.02 |
| | Ասֆ./բետոնե ծածկույթի իրականացում | | | | |
| 1 | Մանրահատիկ ասֆ./բետոնե ծածկույթի իրականացում h=4սմ | մ$^2$ | 50.0 | 3.60 | 180.09 |
| 2 | Խոշորահատիկ ասֆ./բետոնե ծածկույթի իրականացում h=6սմ | մ$^2$ | 50.0 | 4.72 | 236.05 |
| 3 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ | մ$^2$ | 50.0 | 0.99 | 49.64 |
| | Բասկետբոլի շիթի կառուցում | | | | |
| 1 | Բետոնե հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով | մ$^3$ | 0.42 | 47.67 | 20.02 |
| 2 | Վահան բասկետբոլի համար | հատ | 2.0 | 85.58 | 171.15 |
| | Կախովի առաստաղի տեղադրում «Ամստրոնգ» կարկասի հետ միասին | | | | |
| 1 | Կախովի առաստաղի տեղադրում «Ամստրոնգ» կարկասի հետ միասին | մ$^2$ | 145.5 | 6.35 | 923.82 |
| 2 | Կախովի առաստաղի պրոֆիլի արժեքը | գմ | 193.5 | 0.66 | 128.05 |
| 3 | Մարզադահլիճի պատուհանների ցանցապատում ներսից 4մմ պարանի հյուսվածքով | մ$^2$ | 30.24 | 0.78 | 23.59 |
| 4 | Նույնի Φ15 պողպատե ցինկապատ խողովակից քիվերի ամրացում պատին հեղույսներով (ցանցի համար) | մ | 24.0 | 1.43 | 34.29 |
| | Ջևավոր աստիճան | | | | |
| 1 | Հիմքերի համար հողի քանդում | մ$^3$ | 10.0 | 2.43 | 24.31 |
| 2 | Ե/բետոնե հիմքերի իրականացում B15 դասի բետոնով | մ$^3$ | 5.0 | 45.04 | 225.19 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Ամրանային ցանց Φ10AIII դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.038 | 302.25 | 11.49 |
| 4 | Ամրանային ցանց Φ6AI դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.014 | 306.99 | 4.27 |
| 5 | Ներդիր տարրեր տեղադրումով | կգ | 3.0 | 0.55 | 1.66 |
| 6 | Հողի ետ լիցք և տոփանում | մ$^3$ | 5.0 | 1.02 | 5.08 |
| 7 | Գրունտի հարթեցում և տոփանում | մ$^3$ | 5.0 | 1.02 | 5.08 |
| 8 | Լվացված ավազի շերտ | մ$^3$ | 4.0 | 3.88 | 15.51 |
| 9 | Մետաղական կանգնակներ Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.206 | 408.88 | 84.23 |
| 10 | Մետաղական կապեր Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.287 | 434.03 | 124.57 |
| 11 | Կապեր Φ25AI, տեղադրումով | տ | 0.216 | 367.45 | 79.22 |
| 12 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ$^2$ | 21.0 | 79.05 | 16.25 |
| | Ուժային վարժասարք | | | | |
| 1 | Հիմքերի համար հողի քանդում | մ$^3$ | 10.0 | 2.43 | 24.31 |
| 2 | Ե/բետոնե հիմքերի իրականացում B15 դասի բետոնով | մ$^3$ | 4.0 | 45.04 | 180.15 |
| 3 | Ամրանային ցանց Φ10AIII դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.0336 | 302.25 | 10.16 |
| 4 | Ամրանային ցանց Φ6AI դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.018 | 306.99 | 5.53 |
| 5 | Մետաղակն ներդիր տարրեր թիթեղից δ=4մմ տեղադրումով | կգ | 2.7 | 0.55 | 1.49 |
| 6 | Հողի ետ լիցք և տոփանում | մ$^3$ | 6.0 | 1.02 | 6.10 |
| 7 | Գրունտի հարթեցում և տոփանում | մ$^3$ | 4.0 | 1.02 | 4.07 |
| 8 | Լվացված ավազի շերտ | մ$^3$ | 4.5 | 3.88 | 17.48 |
| 9 | Մետաղական կանգնակներ Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.083 | 408.88 | 33.94 |
| 10 | Մետաղական կապեր Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.087 | 434.03 | 37.76 |
| 11 | Մետաղական կապեր Φ60x3 խողովակից, տեղադրումով | տ | 0.113 | 492.03 | 55.60 |
| 12 | Φ30x2 ,մոնտաժումով | կգ | 3.20 | 0.47 | 1.51 |
| 13 | Ամրան AI դասի, մոնտաժումով | կգ | 1.6 | 0.31 | 0.49 |
| 14 | Կապեր Φ25AI, տեղադրումով | տ | 0.216 | 367.45 | 79.22 |
| 15 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ$^2$ | 23.0 | 79.05 | 18.18 |
| | Վարժային նստարան | | | | |
| 1 | Հիմքերի համար հողի քանդում | մ$^3$ | 5.0 | 2.43 | 12.16 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Ե/բետոնե հիմքերի իրականացում B15 դասի բետոնով | մ$^3$ | 2.0 | 45.04 | 90.08 |
| 3 | Ամրանային ցանց Φ10AIII դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.0171 | 302.25 | 5.17 |
| 4 | Ամրանային ցանց Φ6AI դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.0064 | 306.99 | 1.96 |
| 5 | Մետաղակն ներդիր տարրեր թիթեղից δ=4մմ տեղադրումով | կգ | 2.1 | 0.55 | 1.16 |
| 6 | Հողի ետ լիցք և տոփանում | մ$^3$ | 3.0 | 1.02 | 3.05 |
| 7 | Գրունտի հարթեցում և տոփանում | մ$^3$ | 2.0 | 1.02 | 2.03 |
| 8 | Լվացված ավազի շերտ | մ$^3$ | 3.5 | 3.88 | 13.59 |
| 9 | Մետաղական կանգնակներ Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.0246 | 408.88 | 10.06 |
| 10 | Մետաղական կապեր Φ60x3 խողովակից, տեղադրումով | կգ | 13.20 | 0.47 | 6.25 |
| 11 | Կապեր ամրան Φ25AI դասի, մոնտաժումով | կգ | 20.0 | 0.41 | 8.13 |
| 12 | Կապեր մետաղական տաշտաձև հեծանով [8 ,մոնտաժումով | կգ | 6.0 | 0.48 | 2.89 |
| 13 | Կապեր մետաղական անկյունակներով L45x4 ,մոնտաժումով | կգ | 29.0 | 0.50 | 14.61 |
| 14 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ$^2$ | 3.0 | 79.05 | 2.37 |
| 15 | Նստարանի փայտե չորսուների պատրաստում և տեղադրում | մ$^2$ | 1.5 | 7.61 | 11.41 |
| 16 | Նստարանի փայտյա տարրերի յուղանեկում 2 անգամ | մ$^2$ | 3.3 | 1.47 | 4.84 |
| | Պտտաձողեր | | | | |
| 1 | Հիմքերի համար հողի քանդում | մ$^3$ | 5.0 | 2.43 | 12.16 |
| 2 | Բետոնե հիմքերի իրականացում B15 դասի բետոնով | մ$^3$ | 3.0 | 42.73 | 128.20 |
| 3 | Ամրանային ցանց Φ10AIII դասի ամրանից, տեղադրումով | կգ | 14.8 | 0.32 | 4.75 |
| 4 | Ամրանային ցանց Φ6AI դասի ամրանից, տեղադրումով | կգ | 2.5 | 0.33 | 0.81 |
| 5 | Մետաղակն ներդիր տարրեր թիթեղից δ=4մմ տեղադրումով | կգ | 3.0 | 0.55 | 1.66 |
| 6 | Հողի ետ լիցք և տոփանում | մ$^3$ | 2.0 | 1.02 | 2.03 |
| 7 | Գրունտի հարթեցում և տոփանում | մ$^3$ | 3.0 | 1.02 | 3.05 |
| 8 | Լվացված ավազի շերտ | մ$^3$ | 2.5 | 3.88 | 9.71 |
| 9 | Մետաղական կանգնակներ Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.1287 | 408.88 | 52.62 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Կապեր Φ25AI, տեղադրումով | տ | 0.0254 | 420.19 | 10.67 |
| 11 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ$^2$ | 5.0 | 79.05 | 3.95 |
| | Ջուգափայտեր | | | | |
| 1 | Հիմքերի համար հողի քանդում | մ$^3$ | 7.0 | 2.30 | 16.07 |
| 2 | Ե/բետոնե հիմքերի իրականացում B15 դասի բետոնով | մ$^3$ | 3.0 | 44.91 | 134.72 |
| 3 | Ամրանային ցանց Φ10AIII դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.04 | 302.25 | 12.09 |
| 4 | Ամրանային ցանց Φ6AI դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.006 | 306.99 | 1.84 |
| 5 | Մետաղակն ներդիր տարրեր թիթեղից δ=4մմ տեղադրումով | կգ | 1.8 | 0.55 | 0.99 |
| 6 | Հողի ետ լիցք և տոփանում | մ$^3$ | 4.0 | 0.96 | 3.84 |
| 7 | Գրունտի հարթեցում և տոփանում | մ$^3$ | 3.0 | 0.96 | 2.88 |
| 8 | Լվացված ավազի շերտ | մ$^3$ | 3.0 | 3.90 | 11.69 |
| 9 | Մետաղական կանգնակներ Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.06 | 408.99 | 24.54 |
| 10 | Մետաղական կապեր Φ50x3 խողովակից, տեղադրումով | տ | 0.057 | 409.02 | 23.31 |
| 11 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ$^2$ | 4.70 | 76.41 | 3.59 |
| | Լաբիրինթոս | | | | |
| 1 | Հիմքերի համար հողի քանդում | մ$^3$ | 13.0 | 2.30 | 29.84 |
| 2 | Ե/բետոնե հիմքերի իրականացում B15 դասի բետոնով | մ$^3$ | 7.5 | 44.86 | 336.47 |
| 3 | Ամրանային ցանց Φ10AIII դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.049 | 302.25 | 14.81 |
| 4 | Ամրանային ցանց Φ6AI դասի ամրանից, տեղադրումով | տ | 0.0076 | 306.99 | 2.33 |
| 5 | Մետաղակն ներդիր տարրեր թիթեղից δ=4մմ տեղադրումով | կգ | 7.2 | 0.55 | 3.96 |
| 6 | Հողի ետ լիցք և տոփանում | մ$^3$ | 5.5 | 0.96 | 5.28 |
| 7 | Գրունտի հարթեցում և տոփանում | մ$^3$ | 7.5 | 0.96 | 7.20 |
| 8 | Լվացված ավազի շերտ | մ$^3$ | 3.0 | 3.90 | 11.69 |
| 9 | Մետաղական կանգնակներ Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.06 | 408.99 | 24.54 |
| 10 | Մետաղական կապեր Φ76x4 խողովակից, տեղադրումով | տ | 0.195 | 408.99 | 79.75 |
| 11 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ$^2$ | 16.90 | 76.41 | 12.91 |
| | Բետոնե ուղիներ | | | | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ | մ$^2$ | 53.0 | 1.18 | 62.73 |
| 2 | Բետոնե ուղիների իրականացում B12,5 դասի բետոնով b=60մմ δ=100մմ S=53,0մ$^2$ | մ$^3$ | 5.3 | 35.26 | 186.85 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 80x20 մմ չափերի բետոնե հիմքի վրա (B25 դասի) | մ | 108.6 | 4.41 | 478.55 |
| | *Ընդամենը 1-1 մասի* | | | | |
| | 1-2. Դահլիճների օդափոխության համակարգ | | | | |
| 1 | Պատուհանի փեղկի վրա տեղադրվող արտածող օդափոխիչ, տեղադրումով L=1500մ$^3$/ժամ, | կ-տ | 4 | 142.8 | 571.30 |
| | Օդափոխիչների էլեկտրամատակարարում | | | | |
| 1 | Հաղորդալար պղնձե, տեղադրումով, հատվածքը 3x2,5մմ$^2$ | մ | 100.0 | 62.34 | 62.3 |
| 2 | Պոլիէթիլենային կիսախողովակ Φ20, տեղադրումով | մ | 100.0 | 0.14 | 14.34 |
| 3 | Ավտոմատ անջատիչ 220Վ, 10Ա , տեղադրումով | հատ | 4 | 1.13 | 4.51 |
| 4 | Երկաթակապ | հատ | 160.0 | 1.14 | 1.83 |
| | *Ընդամենը շին.* | | | | *17053.9* |
| | *Ժամանակավոր շենքեր և շինություններ 2%* | | | | 341.08 |
| | *Շահույթ 11%* | | | | 1.913.45 |
| | *Ընդամենը* | | | | 19.308.425 |
| | *Չնախատեսված աշխատանքներ ծախսեր 3%* | | | | 579.26 |
| | *Ընդամենը* | | | | 19.887.69 |
| | *ԱԱՀ 20%* | | | | 3.977.54 |
| | *Ընդամենը* | | | | 23.865.23 |
| | *Մարքավորումներ* | | | | 593.3 |
| | *Ընդանուրը* | | | | 24.458.53 |

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ՇԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011009314, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն ..... Մ. Բյուրքչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Խաչատուրյանի Բիլդինգ
Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն .....
(ստորագրություն)

*Հավելված թիվ 1.1*
*08 .09.2016 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/8 գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## ՀՀ Արագածոտնի մարզի գ.Քուչակի դպրոցի վերակառուցման աշխատանքների

| | | |
|---|---|---|
| 1 | Շինարարության բնութագիրը | Միջնակարգ դպրոցի վերակառուցման (մնացորդային) շինաշխատանքներ: |
| 2 | Տվյալներ հիմնական կառույցի վերաբերյալ | Օբյեկտի վերակառուցումն իրականացվել է ՀՀ 2013-2014 թվականների պետական բյուջեների հաշվին:<br>2013-2014թվականների ընթացքում իրականացվել են գոյություն ունեցող միահարկ մարզադահլիճային մասնաշենքի ամրացման, հիմնանորոգման՝ ներքին ամբողջական հարդարման, ներքին հաղորդակցուղիների՝ ջեռուցման, ջրամատակարարման, էլ.մատակարարման համակարգերի կառուցման , արտաքին հարդարման աշխատանքներ: |
| 3 | Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ | Հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսվում են օբյեկտի մնացորդային՝ օդափոխության համակարգի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքները՝ այն սահմանված կարգով շահագործման հանձնելու համար:<br>Նշված աշխատանքները կազմում են շինօբյեկտի ամբողջ ծավալի շուրջ 17.0%-ը : |
| 4 | Տրվող նախագծի կազմը | Աշխատանքային նախագիծ, փորձաքննության դրական եզրակացություն, ծավալաթերթ-նախահաշիվ /փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակներով/ |
| 5 | Ներկայացվող հիմնական պահանջներ | Շինարարական աշխատանքներն իրականացնել նորմատիվ փաստաթղթերով սահմանված շինարարական նորմերի համաձայն: |

**Պ ա տ վ ի ր ա տ ու**
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ՕՐԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011009314, ՀԿՀՀ 02553861

Տնօրեն ..... Մ. Բյուրքչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ ա տ ա ր ո ղ**
<<Խաչատուրյանի Բիլդինգ
Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀԿՀՀ 04715751

Տնօրեն ..... Ս.Խաչատուրյան
(ստորագրություն)

*Հավելված թիվ 2*
*08 .09.2016 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/8 գնման պայմանագրի*

## ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի դպրոցի վերակառուցման աշխատանքների կատարման

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ՀՀ Արագածոտնի մարզի գյուղ Քուչակի դպրոցի վերակառուցման աշխատանքների | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը | 10.11.2016 թ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը | 10.11.2016 թ |

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ՇԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011009314, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն ..... Մ. Քյուրքչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Խաչատուրյանի Բիլդինգ
Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն ..... Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված թիվ 3*
*08.09.2016 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/8 գնման պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի դպրոցի վերակառուցման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | 24213944 | 24213944 | 24213944 | 24213944 | 24213944 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են անողական կարգով*

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011009314, ՀԿՀՀ 02553861

Տնօրեն ---------- Ս. Քյուրքչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Խաչատուրյանի Բիլդինգ
Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀԿՀՀ 04715751

Տնօրեն ---------- Ա. Խաչատուրյան
(ստորագրություն)
04715751
«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ»
Կ.Տ.
«Khachaturyani Building Group»

*Հավելված թիվ 4*
*08.09.2016 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/8 գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ _____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ _____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված թիվ 4.1*
*08.09.2016 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/8 գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------ -ին կնքված N -------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- --ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն